ԿԱՐԾԻՔ

Մարիաննա Տիգրանի Հակոբյանի «Նախընտրական հեռուստաբանավեճը ՀՀ հեռուստաեթերում» թեմայով ատենախոսության վերաբերյալ՝ Ժ.01.06.- «Ժուռնալիստիկա» մասնագիտությամբ բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար

Հաղորդակցական հարացույցները հանրության կենսակերպի անբաժան ուղեկիցներն են: Այս համատեքստում մեդիան իր փոխակերպումներով 20-րդ դարում և 21-րդ դարասկզբին շարունակում է մնալ որպես սոցիումի ներսում տեղի ունեցող իրադարձությունների անմիջական դերակատար՝ նոր դրսևորումներով ու ձևաչափերով: Դրանցից մեկին՝ հեռուստաբանավեճին նվիրված հետազոտությունները այսօր էլ պահպանում են իրենց արդիական նշանակությունը, ինչով և հիմնավորվում է Մարիաննա Հակոբյանի թեկնածուական աշխատանքի կարևորությունը:

Կառուցվածքային առումով ներկայացված գլուխներն ու ենթագլուխներն ընդգրկում են այն խնդիրները, որոնց հստակ բաժանումները, ինչպես նաև հետազոտության արդիականության, նպատակի, մեթոդաբանական հիմքերի, գործնական նշանակության հիմնավորումները առկա են ներածության մեջ:

Առաջին գլխում /«Նախընտրական հեռուստաբանավեճ. սկզբնավորումը և զարգացման ընթացքը»/ տրված պատմական ակնարկը անդրադարձ է արևմտյան երկրներում սկզբնավորված ու ձևավորված հեռուստաբանավեճի ավանդույթներին, առանձնահատկություններին: Հեղինակն իրավացիորեն նկատում է, որ ԱՄՆ-ում ու եվրոպական տերություններում կազմակերպվող նախընտրական հեռուստաբանավեճերը «պարունակում են ժողովրդավարական, քաղաքացիական և հասարակական նշանակության...կարևոր տարրեր, որոնք հարակից են նրա քաղաքական նշանակությանը» /էջ 56/: Արևմտյան ժողովրդավարության պայմաններում ձևավորված հեռուստաբանավեճի հիմնական յուրահատկությունների մատուցումը թերևս կարևոր է համեմատական զուգահեռի մեջ դիտարկելու հայաստանյան նախընտրական իրադարձությունների առանձնահատկությունները և համապատասխան հետևություններ անելու:

Ատենախոսն ուշագրավ դիտարկումներ է ներկայացնում աշխատանքի երկրորդ տեսական գլխում /«Նախընտրական հեռուստաբանավեճի հարաքաղաքական նշանակությունը»/: Նա այստեղ հստակեցնում է հեռուստաբանավեճին առնչվող հիմնական հայեցակետերը, որոնք ձևակերպված են միջազգային տեսաբանների աշխատություններում: Ըստ այդմ առանձնացվել են փոքր ենթագլուխներ, որոնք արվել են մտածված կերպով. նպատակ է դրվել տեսական աշխատությունների հիմքի վրա քննել հեռուստաբանավեճի բովանդակային խնդիրները, տարբեր դիտանկյուններից ներկայացնել նրան հարակից գիտակարգային ըմբռնումները (մեդիա և քաղաքականություն, մեդիա և սոցիոլոգիա, մեդիա և հոգեբանություն և այլն): Ճիշտ է նկատում հեղինակը, որ դրանք, հետազոտողների տեսադաշտում լինելով, պիտի մնան որոշակի հեռավորության վրա, հակառակ դեպքում ստվերում կթողնեն հեռուստաբանավեճին բնորոշ գործառույթները, և առաջին հերթին՝ լրաստեղծումն ու լրատվությունը: Սա ընդունելի և հիմնավորված մոտեցում է՝ մեդիագիտության համատեքստում քննելու հեռուստաբանավեճի առաքելությունն ու անելիքները:

Ատենախոսն իր հիմնական ասելիքը հանգամանորեն ներկայացրել է երրորդ գլխում՝ վերնագրելով այն «Նախընտրական հեռուստաբանավեճը ՀՀ հեռուստաեթերում»: Տեսադաշտում երկու տասնամյակների ընթացքում (2003-2023թթ.) կուտակված մեծածավալ նյութն է՝ 21-րդ դարասկզբի նախագահական ընտրություններին նախորդած հեռուստաբանավեճից մինչև տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններին առնչվող հեռուստաբանավեճերը: Հեղինակը քաջածանոթ է նյութին, ներկայացնում է դրանք մեծ ու փոքր դրվագներով: Նրա ուշադրությունից չեն վրիպել ոչ միայն հայաստանյան ԶԼՄ-ների, այլև միջազգային դիտորդական առաքելությունների արձագանքները: Ժամանակի ընթացքում կուտակված մեծաթիվ հեռուստա և ռադիոնյութերի, տպագիր ու առցանց հրապարակումների, տարբեր փաստաթղթերի մեկտեղումը մեկ հետազոտության մեջ ինքնին արդեն կարևոր և խրախուսելի փաստագրական աշխատանք է:

Ատենախոսը փորձել է համեմատական քննությամբ ի հայտ բերել հեռուստաբանավեճի տարբեր կողմերը բացահայտող օրինաչափություններ, քննել է տարաբնույթ մեկնաբանություններ. դրանց հանդեպ դիրքորոշումը աշխատանքի տարբեր հատվածներում՝ հաջող քննություն է բռնել: Նշված դրականի հետ մեկտեղ այս

գլխի որոշ հատվածներում առկա է նաև թերի կողմը. նկարագրվող նյութերի մեծ ծավալը երկրորդ պլան է մղել վերլուծական դիտարկումների և ընդհանրացումների անհրաժեշտությունը: Թերևս բացառություն է երրորդ գլխի 3.5 ենթագլուխը, որտեղ հեղինակը ներկայացրել է նախընտրական հեռուստաբանավեճի առանձնահատկությունների մասին իր ընդհանրական մոտեցումները: Դրանց զգալի մասը ներկայացված է հաջող ձևակերպումներով, «հեռուստաբանավեճ» երևույթի տարբեր կողմերի, դրսևորման օրինաչափությունների ու մատուցման յուրահատկությունների դիպուկ բնութագրումներով: Ընդ որում՝ կարճ, ամփոփ և ընդգրկուն: Սակայն այս համապատկերում Մարիաննա Հակոբյանի ներկայացրած բուն եզրակացությունները ատենախոսության ամբողջական պատկերը չեն ներկայացնում: Ավելացնեմ նաև, որ սովորաբար ատենախոսությունները ենթավերնագրերով եզրակացություններ չեն ունենում, ինչն առկա է այս դեպքում: Նշենք մասնավորապես «Հեռուստաբանավեճերի կազմակերպում և անցկացման մեթոդներ» խորագիրը, որի որոշ մասեր կարելի էր տեղադրել, ասենք, Ներածության մեջ:

Իմ հաջորդ դիտողություն-նկատառումը հետևյալն է. կարծում եմ՝ երկրորդ և երրորդ գլուխների միջև պակասում են ներքին փոխկապակցվածությունը, տեսական հաստատումները գործնական հարթության մեջ տեղափոխելուն միտված անցումները: Այս նպատակով թերևս արժեր երրորդ գլխում՝ անհրաժեշտ տեղերում, ժամանակ առ ժամանակ մեջբերել կամ անդրադառնալ հիշյալ տեսաբանների՝ հեռուստաբանավեճին նվիրված այս կամ այն դրույթը, ինչը ավելի հիմնավոր կդարձներ հայաստանյան փորձի մասին հեղինակի վերլուծություն-դիտարկումները:

Աշխատանքն ընդհանուր առմամբ գրված է գրագետ շարադրանքով, ներկայացված գրականության ցանկը համապատասխանում է թեկնածուական ատենախոսության պահանջներին:

Նշված թերություններն, ինչ խոսք, չեն ստվերում այն մեծածավալ աշխատանքը, որ կատարել է ատենախոսը՝ համակողմանիորեն ներկայացնելով նախընտրական հեռուստաբանավեճը, նրա անցած ուղին, դրսևորման բնութագրական կողմերը հայաստանյան լրատվամիջոցների համապատկերում: Ի վերջո, իբրև քաղաքական մեդիաբովանդակությունը հեռարձակող միջոց՝ այն ուսանելի շատ բան ունի փոխանցելու

հատկապես նախընտրական շրջաններում ակտիվացող քաղաքական ուժերի և նրանց գործունեությունը լուսաբանող լրատվամիջոցների ներկայացուցիչներին:

Ուստի միջնորդում եմ 012 մասնագիտական խորհրդին՝ Մարիաննա Տիգրանի Հակոբյանին շնորհելու իր հայցած բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանը:

Պաշտոնական ընդդիմախոս՝

Դավիթ Վլադիմիրի Պետրոսյան

Բանասիրական գիրքությունների դոկտոր, պրոֆեսոր

13. 06. 2025 թ.

Բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Դ. Վ. Պետրոսյանի ստորագրությունը հաստատում եմ՝

ԵՊՀ գիտական քարտուղար՝ Մ. Վ. Հովհաննիսյան